*Ծանոթ. Վերջին հապավումը, թերևս, քանդակագործության հեղինակի անուն-ազգանվան գլխատառերն են:*

*768.* Տապանաքար, *վրան՝ 2 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՕՐԻՈՐԴԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ ԹԱՍԱԼԵԱՆՑԻ./ ԾՆ. 1886 Թ., ՎԱԽՃ. 1904 Թ. ՅՈՒԼԻՍԻ 24-Ի ԴԵՐԲԵՆԴ:

## ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՏԱՊԱՆԱՔԱՐ

*769* Տապանաքար, *փոքր-ինչ շրջված, վրան՝ 3 տող ռուսերեն.*




ДАВИДЪ БЕКЪ И СЕСТРА/ ТАМАРА ОРБЕЛОВЫ/ 1867/1897.

Լուսանկ. 231

*770.* Տապանաքար, *եռաստիճան պատվանդանով, վրան՝ 3 տող.*



ՄՈՎՍԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՕՐԲԵԼԵԱՆՑ/ 1842-1892/ ՍԻՒՆԵԱՑ ՂԱՓԱՆՈՒ ՎԱՉԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻ:

Լուսանկ. 232

*771.* Տապանաքար, *նույնակերպ.*



ՊՕՂՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ/ ՕՐԲԵԼԵԱՆՑ, ՍԻՒՆԵԱՑ ՂԱՓԱՆՈՒ/ ՎԱՉԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻ. 1849-1892:

Լուսանկ. 233

*772.* Տապանաքար *(1մ×40 սմ), վրան՝ խաչ, կողերին.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆԿԱՆ/ ԼԵՒՈՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ/ ՕՐԲԵԼԵԱՆՑ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 1891 Թ[ՎԻՆ].

Լուսանկ. 234

*Մյուս կողմին՝*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆԿԱՆ ՌՈՒԲԷՆ ՕՐԲԵԼԵԱՆՑ./ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 1891 Թ.

*773.* Տապանաքար, *երկաստիճան պատվանդանով. Մի կողին՝ 5 տող.*



ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ԴԱԼԱԼԵԱՑ ՅԱԿՈԲԵԱՆ, ՈՐ Է/ ԿՈՂԱԿԻՑ ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՕՐ/ԲԵԼԵԱՆՑԻ, ՈՐ ՎԱԽՃԱՆՈՒԵՑ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ/ 1892 ԱՄԻ 19 ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ ԻՒՐ ՀԱՐՍՆՈՒԹԵԱՆ/ ԵՐ[Ր]ՈՐԴ ԴԱՐՈՒՄ. ԾՆՈՒԱԾ ԷՐ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔՈՒՄ 1861 Թ.:

*Մյուսին՝ նույն գրերով ոտանավոր 6 տող.*



ՎԱՅ ՀԱՐՍՆՈՒԹԵԱՆ ԻՄ ՕՐԵՐՈՒՆ,
ՈՐ ԼՈՅՍ ԶԴԵՍԱԾ ԽԱՒԱՐԵՑԱՆ,
ԿԵԱՆՔԻՍ ԱՐԵՒԸ ԵՐԿՐԻ ԾՈՑՈՒՄ
ՅԱՒԷՐԺ ՔՆՈՎ ԸՆԿՂՄԵՑԱՒ.
ԵՒ ԽԵՂՃ ԶԱՒԻՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԸ
ԴԵՌ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՐԲԱՑԱՒ:

Լուսանկ. 235, մի մասը

*774.* Տապանաքար, *երկասաիճան պատվանդանով, գագաղաձև, վրան՝ նախշեր, խաչ և 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՓԱՆԻ/ ՎԱՀԶԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻ ՏՊԻՐ/ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ/
ՕՐԲԷԼԵԱՆՑԻՆ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ 1890 Թ[ՎԻՆ]. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ:

Լուսանկ. 236

*775.* Տապանաքար, *գագաղաձև, երկասաիճան պատվանդանով: Հարավային կողին՝ 3 տող.*



Ո|Կ
Վ|Ա ԵՂԻՍԱԲԵԹ ՕՐԲԷԼԵԱՆՑ/ ԵՒ ԹՈՌԱՆ ՆՈՐԱ ՌՈՒԲԷՆԻ/. 1826/1898:

Ծանոթ. *Տե՛ս № 724 արձանագրության ծանոթությունը:*

Լուսանկ. 237

*776.* Տապանաքար, *երկասաիճան պատվանդանով, վրան՝ խաչանշան և 6 տող.*



ՕՐԻՈՐԴ/ ԵՂԻՍԱԲԵԹ/ ՕՐԲԷԼԵԱՆՑ/ 13 ԱՄԱՑ ԾԱՂԻԿ/
ՀԱՍԱԿԻ ՄԷՋ/ ՋՕՀՎԵՑ:

Լուսանկ. 238

*777.* Տապանաքար, *ղագաղաձև, երկաստիճան պատվանդանով, վրան՝ խաչանշան: Մի կողին 4 տող.*



ՊԵՏՐՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ/ ՕՐԲԷԼԵԱՆ ՂԱՓԱՆՈՒ
ՎԱՋԱ/ԴԱՆ ԴԻՒՂԱՑԻ. 47 ԱՄԱՑ ՋՈՀ/ ԴՆԱՑ 1906 ԱՄԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 31-ԻՆ:
*Մյուսին՝* 2 տող
ԱՐԻՒՆԱՐԲՈՒ ԱԻԱԶԱԿ/ՆԵՐԻ ԳՆՏԱԿՆԵՐԻՆ:

Լուսանկ. 239

*778.* Տապանաքար, *ուղղված, վրան՝ 2 տող կցագիր.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՓԱՆՑԻ ԴԱԲՐԻԷԼ
ՊՕՂ/ՈՍԵԱՆԻ/ԱՄՈՒՍՆԻՈՅՆ
ՄԱՐԻԱՄԱՑ. 1827 ԹԻՎ:

*779* Տապանաքար, *ղարղանախշերով. վրան՝ 5 տող.*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԼՈՒՍԱՀՈԳԻ/ ՍԻՒՆԵԱՑ ԳԱՒԱՌԷ ԳԻՒՐԻՍ ԴԻՒՂԱՑԻ/ ՇՈՒՇՈՒԱԲՆԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ ՊՕՂՈՍԵԱՆ/ ԱԶԳԱՏՈՀՄ ՏՕՌՈՋԵԱՆՑԻ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ 1888 ԱՄԻ 4 ՅՈՒՆԻՍԻ 80 ԱՄՕՔ ՀԱՍԱԿԻ:

Լուսանկ.240

*780.* Տապանաքար, *հյուսիսային կողին՝ 5 տող.*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆՆ ՇԱՄ
ԱԽԵՑԻ ՊԵՏՐՈՍ ՆԻԿԻՏԵԱՆ ՍԵՐ
ԵԲՐԱԿԵԱՆՑԻ ՎԱԽՃԱՆՎԵՑԱՒ
1908 ԱՄԻ ՅՈՒՆԻՍԻ 14 ԻՆ 45
ԱՄՕՔ ՀԱՍԱԿԻ

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆՆ ՇԱՄ/ԱԽԵՑԻ ՊԵՏՐՈՍ ՆԻԿԻՏԵԱՆ ՍԵՐ/ԵԲՐԱԿԵԱՆՑԻ. ՎԱԽՃԱՆՎԵՑԱՒ/ 1908 ԱՄԻ ՅՈՒՆԻՍԻ 14-ԻՆ 45/ԱՄՕՔ ՀԱՍԱԿԻ:

Լուսանկ. 241

*781.* Տապանաքար, *ուղղանկյունաձև, հյուսիսային կողին՝ 6 տող.*

ՑԱՅՍՄԻԿ ՏԱՊԱՆԻ ԱՄՓՈՓԻՆ ՈՍԿԵՐՔ/ ՅՈՒՍՏԻԱՆԷԻ՝ ԴՍՏԵՐ ՌՈՍՏՈՄԱՅ/ ՊԱՊԱՅԻԱՆՑ, ՈՐ ԿՆՔԵԱՑ ՋԵՐԿՐԱՒՈՐ/ ՋԿԵԱՆՍ ԻՒՐ Ի ԾԱՂԿԱՓԹԻԹ ՀԱՍԱԿԻ/ ԻԲՐԵՒ ՔՍԱՆԵԻՄԻ ԱՄԵՆԻՑ յ7 ՄԱՅԻՍԻ/ 1875 ԱՄԻ:

Լուսանկ. 242

*782.* Տապանաքար, *վրան՝ ծաղկավոր խաչանշան. հյուսիսային կողին՝ 4 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ԿՈՂԱԿԻՑՆ ՄԿՐԴՈՒՄԱՅ
ՊԱՊԱԵԱՆՑԻ
6ԻՆ ՅՈՒԼԻՍԻ 1878 ԱՄԻ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ/ ԿՈՂԱԿԻՑՆ ՄԿՐԴՈՒՄԱՅ/ ՊԱՊԱԵԱՆՑԻ/. 6-ԻՆ ՅՈՒԼԻՍԻ 1878 ԱՄԻ:

Լուսանկ. 243

*783.* Տապանաքար, *գորշ կրաքարից, ուղղանկյունաձև, պատվանդանով: Վրան՝ 4 տող.*

ԸՆԴ ՎԻՄԱՒՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՋԳՈՆԱՄԻՏ
ՌՈՍՏՈՄԱՅ ՄԿՐՏԻՉԵԱՆ
ՊԱՊԱԵԱՆՑԻ
ՎԱԽՃԱՆԵԼՈՅ Ի 8-ԻՆ ՅՈՒՆՎԱՐԻ 1907 ԱՄԻ ՀԱՍԱԿԻ 87 ԱՄԱՅ

ԸՆԴ ՎԻՄԱՒՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՋԳՈՆԱՄԻՏ/ ՌՈՍՏՈՄԱՅ ՄԿՐՏԻՉԵԱՆ/ ՊԱՊԱԵԱՆՑԻ/. ՎԱԽՃԱՆԵԼՈՅ Ի 8-ԻՆ ՅՈՒՆՎԱՐԻ 1907 ԱՄԻ ՀԱՍԱԿԻ 87 ԱՄԱՅ:

Լուսանկ. 244

*784.* Տապանաքար, *նախորդի ախպի. վրան՝ 4 տող.*

ԸՆԴ ՎԻՄԱՒՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՋԳՈՆԱՄԻՏ/ ՄԱՐԻԱՄԱՅ ՄՈՎՍԷՍԻԱՆ՝ ԿՈՂԱԿՑԻ ՌՈՍՏՈՄԱՅ/ ՊԱՊԱԵԱՆՑԻ,/ ՎԱԽՃԱՆԵԼՈՅ յ8-ԻՆ ՅՈՒՆՎԱՐԻ 1898 ԱՄԻ ՀԱՍԱԿԻ 68 ԱՄԱՅ:

Լուսանկ. 245

*785.* Տապանաքար, *ուղղանկյունաձև, վրան թևավոր խաչ, պատվանդանով: Ցուրտաից պտուերով փորաղրված է 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
ՂԱՐԱԲԱՂՈՒ ՓԱՂԻՄԱԼՑԻ
ԻՆԱՆԱԼԱՌ(?) ՄՈՍԷՍ ՏԷՐ
ԽՍԱԽԱՆ. ՀԱՆԳԵԱՒ Ի ՔՍ /
1850 ԱՄԻ ՅՈՒՆԻՍԻ 20-ԻՆ:

Ծանոթ. *Սկզբի 4-րդ և 5-րդ բառերի վերծանությունը թեական է:*

Լուսանկ. 246

*786.* Տապանաքար, *ուղղանկյունաձև, հարթ մակերեսով, վրան՝ խաչ: Հյուսիսային կողին՝ 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱԶԲԻՆՑԻ
ԱԼԱՀՎԵՐԴԻ ՈՐԴԻ/
ՎԱՐԹԱՆԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ Ի
ՔՍ Թ[ՎԻՆ] ՌՁԲ (1633):

*787* Տապանաքար, *քանդակազարդ նախշերով, ուղղանկյունաձև., վրան՝ 4 տող.*



ՕՎ ՄԱՐԴ, ՏԵՍ ԻՆՁ ԵՒ ՄՏԱԾԻՐ,
ՎԵՐՋԴ ԱՅԴ Է, ՋԳՈՒՇԱՑԻՐ.
ՍԻՐԻՐ ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՔՈ ԸՆԿԵՐ,
ԱՅԴ Է ԲԱՐԻՆ, ՀԱՒԱՏԱՑԻՐ:

Լուսանկ. 247

*788.* Տապանաքար, *ուղղանկյունաձև., երեսին՝ խաչ և. զարդաքանդակներ, պատվանդանի վրա՝ 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇՈՒՇՎԱՑ/ ԳԱՒԱՌԻ ԳԱՂԱՐԾ ԳԻՒՂԱՑԻ/
ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՐԳՍԵԱՆ/ ԹՈՒՄԱՍԵԱՆՑԻՆ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/
1890 Թ[ՎԻ]. ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ին:

Ծանոթ. *Հիշատակված Գաղարծ (Կաղարծ) գյուղը գանվում է ԼՂՀ Մարտունու շրջանում:*

Լուսանկ. 248

*789.* Տապանաքար, *քանդակազարդ, վրան՝ 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՐԲԱՆԴԱԲՆԱԿ/ ԼՈՒՍԱՀՈԳԻ
ԵՂԻՍԱԲԷԹ ՖԵՏՐՈ/ՆԵԱՆ ՕՍՄԱՆՑԵԱՆՑ.
ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ 1900 ԱՄԻ 11 ՅՈՒԼԻՍԻ 38
ԱՄՕՔ:

*Ծանոթ. Գրչագրում սխալմամբ* ամօf-*ի փոխարեն գրված է ամոյ:*

Լուսանկ. 249

*790.* Տապանաքար, *գորշավուն կրաքարից: Հյուսիսային կողին՝ 4 տող.*




ՀԱՍՏ ՀԱՆԳՉԻ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՍԱԻՈՒՐ/ ԳԻՒՂԱՑԻ
ՅԱԿՈՎԲ ՇԱՀԲԱԶԵԱՆ/ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՑ.
ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ 6 ՄԱՐՏԻ 1904 ԱՄԻ 37 ԱՄԱՑ:

Լուսանկ. 250

*791.* Տապանաքար, *եռաստիճան պատվանդանի վրա, նախշազարդ, վրան՝ 6 տող.*
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՂԱՐԱԲԱՂՑԻ ՂԶՂ/ԱԼԱ ԳԻՒՂԱՑԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂՈՒ/ԿԱՍԵԱՆ ԱԶԱՐԵԱՆՑ, ՈՐ 35 ԱՄ/ԵԱՑ ՀԱՍԱԿԻ ՓՈԽԵՑԱՒ Ի ԿԵԱՆՍ/ ԱՆԱՆՑ 18 ԱՊՐԵԼԻ 1887 ԱՄԻ Ի/ ԴԱՐԲԱՆՏ:

Լուսանկ. 251

*792.* Տապանաքար, *սև մարմարից, շրջված մի կողմի, տեղահանված: Երևացող կողին՝ մանր տառերով 10 տող.*

ՄԱՔՈՒՐ ՀԱՒԱՏՈՎ ԵՐԿՆԻՑ ՍԻՐՈՎ ԼԻ,
ԱՆՍԳԻՒՏ ԽՂՃԻՒ ԼՑԵԱԼ ՋՌԱՀ ԽԱՉԻ,
ՅԱՑՍ ՀՈՎՏԷ ԿԵՆԱՑ ՆԵՂ ԱՂԵՏԱԼԻ,
ՍԼԼԱՑԵԱԼ ՀԱՆԳԵԱՒ Ի ԳՈԳ ՔՐԻՍՏՈՍԻ:
ԿԷՆ ԱՌՆ ԳՈՐԾԱԿԻՑ՝ ՃԳԱՆՑ ԵՒ ՋԲԱՂՄԱՆՑ
ՄԱՅՐ Ի ՀՕՐ ՍՓՈՓԱՆՍ՝ ՄԱՐԶԻՉ ՋԱՒԱԿԱՑ,
ՄԽԻԹԱՐ ԸՆՏԱՆԵԱՑ ԳԹԱՌԱՏ ՊԱՇՏՊԱՆ.
ԸՆԿԵՐ ՄՏԵՐԻՄ ՏՈՀՄԻ ՄԱՐԳԿՈՒԹԵԱՆ,
ԵՐԿՆԱՅՆՈՑ ՎԵՀԻՑ ԱՆՃԱՌ ԲԱՐՈՒԹԵԱՆ,
ՑԵՐԿՐԻ ԳԱՂԱՓԱՐ՝ ԱՆՄԱՀ Ի ՄԱՀՈՒԱՆ:

Լուսանկ. 252

*793.* Քառակող կոթող *երկու կողմերին՝ ռանավոր 8 տող.*




ՀԱՆԳԱՐԾԱԿԻ ՄԱՀԸ ԵԿԱՎ
ԱՉՔԻՍ ԱՌԱՋԸ ԿԱՆԳՆԵՑ.
ՋԱՀԵԼ ԿԵԱՆՔՍ ՆԱ ԽԱՎԱՐԵՑ
ԻՄ ՍԻՐԵԼՈՒՑ ԲԱԺԱՆԵՑ:
ՄՆԱՍ ԲԱՐԵՒ, ԻՄ ՍԻՐԵԼԻՍ,
ԱՅԼԵՒՍ ԻՆՁ ՉԵՍ ՏԵՍՆԻ,
ՅԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ ՈՏԱՐ ԱՇԽԱՒ [Հ].
ՎՈՐԸ ՆՈՐ Ե ԻՆՁ ՀԱՄԱՐ:

Լուսանկ. 253-254

*794* Տապանաքար, *նախշազարդ, երկաստիճան պատվանդանով. վրան՝ 4 տող.*




ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՄԱԽԱԲՆԱԿ/ ԳԱԼՈՒՍՏ
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՍԱՐԳԻՍԵ/ԱՆՑԻ.
ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 1887 ԱՄԻ 27/ՕԳՈՍՏՈՍԻ 25
ԱՄՕՔ:

Լուսանկ. 255

*795.* Տապանաքար, *ուղղանկյունաձև, քանդակազարդ. վրան՝ 6 տող.*
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՂԱՐԱԲԱՂՑԻ/ ՂԶՂԱԼԱ ԳԻՒՂԱՑԻ ՀՌԻՓՍԻՄԷ/ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԱԶԱՐԵԱՆՑ./ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 29 ՄԱՐՏԻ 1886/ ԱՄԻ 70 ԱՄԵԱՑ ՀԱՍԱԿԻ Ի/ ԴԱՐԲԱՆՏ:

Լուսանկ. 256

796. Տապանաքար, *ուղղանկյունաձև, վրան՝ 10 տող.*



Ի ՆԵՐՔՈՅ ԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԵՂԻԱՅԻ/ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄՈՒՋԻԿԱՆԴՈՎԻ՝ ԹԱՐՔՄԱՆՉԻՆ ՂԱՅԹԱՂՈՒ/ ԵՒ ԹԱԲԱՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ, ՈՐ ՍՊԱՆԵՑԱՒ Ի/ ԳԻՒՂՆ ՂԱՍԻԽ ՔԱՒԱՌԻՆ ԹԱԲԱՍԱՐԱՆՈՒ 1866 ԱՄԻ 24/ ՕԳՈՍՏՈՍԻ. ԾՆԵԱԼՆ Ի 1832 ԱՄԻ/: ՏԱՊԱՆՆ ԱՅՍ ԿԱԶՄԵԱԼ Է Ի ՄԱՅԻՍԻ ԱՄՍՈՅՆ 1867 ԱՄԻ/ Ի ՁԵՌՆ ՋԱՒԱՀԻՐԻ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՄՈՒՋԻԿԱՆԴՈՎԱՅ/ ԱՅՐՈՒՈՅՆ ՎԻՐՈՔ ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ԵՂԻԱՅԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ/ ՄՈՒՋԻԿԱՆԴՈՎԻ, ՈՐ ՄՏԵԱԼ Ի ՊՍԱԿ ԸՆԴ ՆՄԱ 1859/ ԱՄԻ յ30 ՅՈՒՆՎԱՐԻ:

Լուսանկ. 257

797. Տապանաքար, *ուղղանկյունաձև, հրեշտակների քանդակներով և գծազարդերով: Վրան՝ 6 տող.*



ԱՍՏԱՆՈՐ ԱՄՓՈՓԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԴՈՒՍՏՐ/ ԱՌԱՔԵԼԻ ԲԱԲԱՅԵԱՆՑ, ՈՐ Է ՆՈՐԱՀԱՐՍ/ ԱՄՈՒՍԻՆ ՅՕՀԱՆՋԱՆԻ ՀԱԽՈՒՄԵԱՆՑ, ՈՐ/ ԾՆԵԱԼ Ի 15 ՄԱՅԻՍԻ 1847 ԱՄԻ ԵՒ ՊՍԱԿԵԱԼ/ Ի 24 ՀՈԳՏԵՄԲԵՐԻ 1865 ԱՄԻ ՎԱՂԱԹԱՌԱՄ/ ՋՐԱՒԵՑԱՒ Ի 26 ՕԳՈՍՏՈՍԻ 1866 ԱՄԻ Ի ԳԱՐԲԱՆԳ:

Լուսանկ. 258

798. Տապանաքար, *ուղղանկյունաձև, բուսական զարդաքանդակներով, վրան՝ 5 տող.*



ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՂԱՐԱԲԱՂՑԻ ՂԱՐԱԽԱՆ/ ԳԻՒՂԱՑԻ ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ/ ՏԷՐ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ, ՈՐ յ38 ԱՄԵԱՑ/ ՀԱՍԱԿԻ ՓՈԽԵՑԱՒ Ի ԿԵԱՆՍ ԱՆԱՆՑ/ յ9 ՕԳՈՍՏՈՍԻ 1877 Թ. Ի ԴԱՐԲԱՆՏ:

Լուսանկ. 259

799. Տապանաքար, *նույնաձև, վրան՝ 5 տող.*



ԱՍՏ ԴՆԻ ՄԱՐՄԻՆ ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐ/ ՅԱԿՈԲ-ԲԷԿԻ ԲԱՂԴԱՍԱՐ ԲԷԿԵԱՆ/ ՂԱԶԵԱՆՑ ՇՈՒՇԵՑԻՈՅ. ՎԱԽՃԱ/ՆԵՑԱՒ Ի 20 ՅՈՒԼԻՍԻ 1878 ԱՄԻ/ Ի 37 ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ:

Լուսանկ. 260

*800.* Տապանաքար, *նույնաաիպ, վրան՝ 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊ[Ա]Ն ԱՐՍԷՆ ՔԱՀԱՆԱՅ/ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑԻ. ԾՆԱՒ 1844 ԱՄԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-ԻՆ Ի ԳԵՂՋՆ ԱՒԵՏԱՐԱՆՈՑ/ ՇՈՒՇՈՒԱՅ ԳԱՒԱՌԻ† ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ 1885 ԱՄԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ ԴԵՐԲ[Ե]ՆԴ:

Լուսանկ. 261

*801.* Տապանաքար, *նույն կերպի, քանդակազարդ. վրան՝ 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՀՈԳԻ/ ԴԱՐԲԱՆԴԱՐՆԱԿ ՄԻՆԱՅ ԱՌԱ/ՔԵԼԵԱՆ ԱՐԷԼԵԱՆՑԻ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ 1892 ԱՄԻ 12 ՕԳՈՍՏՈՍԻ 30 ԱՄՕՔ/ՀԱՍԱԿԻ:

Լուսանկ. 262

*802.* Տապանաքար, *նախորդի ոճավորմամբ. վրան՝ 6 տող.*



ԴԱՄԲԱՐԱՆ ՄԱՐԵԱՄ/ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ ԴՈՒՍՏՐ/ ՏՈՒՍՏՐ ՏԷՐ-ՅՈՀԱՆԷՍԻ ԲԱԼԼՈՒՃԱՅ/ ԳԻՒՂԱՑԻ ԵՒ ԾՆԵԱԼ Է Ի 1875 ԱՄԱՑ./ ՀԱՆԳԱՒ ԴԵՐԲԵՆԴՈՒՄ 1898/ ԱՄԱՑ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍ[Ի] 2 ԻՆ:

Ծանոթ. Դուստր *բառը կրկնված է նաև է բարբառային* տուստր *ձևով:*

Լուսանկ. 263

*803.* Տապանաքար, *նախորդի նմանակությամբ. վրան՝ 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՐԱՂՑԻ ՏԻԳՐԱՆ/ ՍԱՐԳԻՍԵԱՆ ՏԷՐ-ՍԻՄԷՕՆԵՆՑԻ. ԾՆ/ԱՒ 1886 ԱՄԻ 2 ՕԴՈՍՏՈՍԻ, ՎԱԽՃԱՆ/ԵՑԱՒ 1910 ԱՄԻ 30 ՅՈՒԼԻՍԻ:

Լուսանկ. 264

*804.* Տապանաքար, *ուղղանկյունաձև, երկասաիճան պաավանդանով, երեսին խաչանշան: Հյուսիսային կողին՝ ոաանավոր 8 տող.*

... ՆԵՐՔՈՅ ԵՏԵԱԼ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՈՍԿԵՐՔ ԱՅՍՄ ՏԱՊԱՆ[ԻՆ]
...ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՒ ՅՈՒԺ ՊԱՆԾԱԼԻ ԽԵՂՃ ՍՏԵՓԱՆ[ԻՆ].
Է ՎԱՂԱԹԱՌԱՄ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍԻՆ ԹՈՌՆ ՅՕՀԱՆ[ԻՆ]՝
ՇՈՒՇՈՒԱՅ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱԽՃԱՆՆ Ի ՕՏԱՐ ԵՐԿՐ[ԻՆ].
ԾՆՈՒՆԴ Ի ՄՕՐԷ 1838 ԱՄԻ ՓՐԿՉԱԿԱՆ ԹԻՒ[ԻՆ],
ԱՌ ՏԷՐ ՓՈԽԵՑԱՒ 1870 ԱՄԻ ԴԱՐԲԱՆԴ ՔԱՂԱՔ[ԻՆ],
ԻՒՐ ԽՂՃԻԿ ԿՆՈՋ ԱՆՏԷՐ ԹՈՂԵԼՈՎ ԱՉՔ ՃԱՆԱՊԱՐ[ԻՆ],
ՈՎ ԱՐԺԱՆ ԿԱՐԴՈՂՔ ՄԷԿ ԲԵՐԱՆ ԱՍԷՔ Ա-Ծ ՈՂՈՐՄ[ԻՆ]:

Լուսանկ. 265

*805.* Տապանաքար, *դագաղաձև, սև ողորկ մարմարից. հյուսիսային կողին՝ 4 տող.*




Ի ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆԻՍ ՀԱՆԳՉԻ/ ՄԱՐՄԻՆ ՇՈՒՇՒՈՅ ՔԱՂԱՔԱՑԻ/ ԱՌԱՔԵԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԲԱԲԱԵԱՆՑԻ/, ՎԱԽՃԱՆԵԼՈՑ Ի 13-Ն ՆՈՅԵՄ[ԲԵՐԻ] 1887 ԱՄԻ Ի ՀԱՍԱԿԻ 80 ԱՄ[Ա]Ց:

Լուսանկ. 266

*806.* Տապանաքար, *սև, հղկված մարմարից. վրան՝ 6 տող.*




ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԼՈՒՍԱՀՈԳԻ/ ԱՆԴՐԷԱՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ/ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ./ ԾՆԱԻ 28-ԻՆ ՅՈՒԼԻՍԻ 1887 ԱՄԻ/, ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 20-ԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ 1913 ԱՄԻ/. ՔԱՂԱՔՆ ԴԱՐԲԱՆԴ:

Լուսանկ. 267

*807.* Տապանաքար, *երկրաչափական զարդանախշերով. պատվանդանի վրա՝ 6 տող.*

ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ ՀԱՆԳՉԻ/ ՄԱՐՄԻՆ ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ/ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՈՎՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՈՒ/ՐԵԱՆ ՍԻՄԷՕՆԵԱՆՑԻ, ՈՐ ԾՆՈՒ/ԱԾ Է 1827 Թ. ԵՒ ՎԱԽՃԱՆՈՒԱԾ/ Է 1906 Թ. ՅՈՒՆԻՍԻ 6-ԻՆ:

Լուսանկ. 268

*808.* Հուշատախտակ, *ագուցված է Դերբենտ քաղաքի Լենինի փողոցի վրա կառուցված երկհարկանի տան վերին հարկի քիվին. ունի 4 տող.*

1896 ԱՄԻ 1 ՄԱՅ[ԻՍԻ]./ ՅՈՎԱԿԻՄ/ ՄԻՐԶՈԵԱՆ/ ԴԵՐԲԵՆԴ:

Լուսանկ. 269

## ՄՈԼԼԱ-ԽԱԼԻԼ ԳՅՈՒՂ
## (ԴԵՐԲԵՆՏԻ ՇՐՋԱՆ)

*Նախկին հայկական այս բնակավայրը գտնվում է Դերբենտից շուրջ 50 կմ հարավ, այժմյան Բելիջի գյուղի մոտ: Ըստ ավանդության այստեղ է եղել պատմական աղբյուրներում հիշատակված Դառն դաշտը, ուր քրիստոնեություն տարածելու ժամանակ տանջամահ եղավ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը:*

*1786 թ. գեներալ Զուբովի կորդագրությամբ բազմաթիվ հայ ընտանիքներ, ընդ որում նաև Մոլլա-Խալիլից գաղթեցին Ռուսաստան, մասնավորապես «Ի Մաճառ» (հիմա՝ Բուդյոնովսկ)*[1]*: Այժմ այստեղ հայեր չեն ապրում: Հայկական հուշարձաններից ոչինչ չի պահպանվել, բացառությամբ մի տապանաքարի և 1916 թ. կառուցած եկեղեցուց, որի կերտողը տաղանդավոր վարպետ Բաբա Գասպարյանցն է:*

---

1 Ս. Ջալալյան. Ճանապարհորդութիւն. Բ, էջ 419: